

**ԿԱՇԱՌՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ**

Պատճառներ, հետևանքներ և բարեփոխում

Սյուզան Ռոզ-Ակերման

Հավելված բառարանը՝ Ալեքսանդր Աղաբեկյանի



CORRUPTION AND GOVERNMENT

Causes, Consequences, and Reform

Susan Rose-Ackerman



**Գ Ի Տ Ա Ն Ք
Երևան 2004**

This project was funded through the US Embassy to Armenia Public Affairs Section grant, and the opinions, findings and conclusions or recommendations expressed herein are those of the Author and do not necessarily reflect those of the US Embassy.

Այս հրատարակությունը միջոցավորվել է Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանության կողմից դեսպանության հանրային գործերի բաժնին տրամադրված դրամաշնորհի միջոցով: Գրքում արտահայտված կարծիքները, ստացված արդյունքներն ու եզրակացությունները հեղինակին են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ-ի դեսպանության դիրքորոշումը:

Ռուզ-Ալեքսան, Սյուզան
Կաշառվածությունը և պեղությունը. պարճառներ, հեղևանքներ և բարեփոխում / -եր.: Գիտանք, 2004. - 248 էջ.

Հետազոտվում է կաշառվածության երևույթը՝ հանրային իշխանության չարաշահումը՝ մասնավոր օգուտ ստանալու նպատակով: Բնութագրվում են դրա դրսևորումներն ու ձևերը բազմաթիվ երկրներում և բոլոր կարևորագույն բնագավառներում՝ տնտեսության, մշակույթի և քաղաքականության: Ներկայացված է կաշառվածության դեմ պայքարի փորձը պետական կառույցների բոլոր մակարդակներում՝ պետության ղեկավարից մինչև ամենացածր պաշտոնյան: Քննարկվում է կաշառվածությունն օրենսդիր, գործադիր և դատական համակարգերում, ինչպես նաև միջազգային հարաբերություններում: Բերված են կաշառվածության և դրա դեմ պայքարի բազմաթիվ օրինակներ, ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների կյանքից:

Նախատեսված է պետական, քաղաքական և հասարակական գործիչների, ինչպես նաև իշխանության և կառավարման հարցերով զբաղվող մասնագետների, ուսանողների և դասախոսների համար:

Թարգմանիչներ՝ Ալեքսանդր Աղաբեկյան, Անուշ Գասպարյան

ISBN 99930-963-5-0

“Government and Corruption” was originally published in English in 1999 by the Press Syndicate of the University of Cambridge.

- © Susan Rose-Ackerman 1999
- © Գիտանք, հայերեն թարգմանության համար, 2004
- © Ալեքսանդր Աղաբեկյան, բառարանի համար, 2004

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	5
----------------------	----------

1. Ներածություն. կաշառվածության ծախքեր	8
---	----------

ՄԱՍ I ԿԱՇԱՌՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

2. Կաշառվածության փնտրեսական հետևանքները	13
Կաշառք, որը հավասարեցնում է առաջարկն ու պահանջարկը	14
Կաշառքը՝ որպես խթանիչ վճար պաշտոնավարների համար.....	19
Ծախքերի նվազեցման կաշառք.....	22
Կաշառվածությունն ու կազմակերպված հանցավորությունը	27
Եզրակացություններ	30
3. Բարձրաստիճան պաշտոնյաների կաշառվածությունը	31
Խոշոր պարավորագրեր և զիջանքներ սրանալու վճարումներ	31
Մասնավորեցում	38
Եզրակացություններ	41
4. Նախադրյալների պակասեցում և ծախքերի ավելացում	42
Ծրագրի փակում	42
Մասնավորեցման վստահելի գործընթացի կազմակերպում	45
Հանրային ծրագրերի բարեփոխում	47
Մրցակցությունը կառավարման համակարգում	51
Հակակաշառվածության օրենքների զսպիչ ազդեցությունը.....	54
Պետական գնումների բարեփոխում	61
Եզրակացություններ	69
5. Զաղաքացիական ծառայության բարեփոխում	71
Վարձարության բարեփոխում	73
Շահերի բախում	77
Պարգև և պատիժ	80
Կաշառվածությունը իշխանության ստորակարգություններում	84
Պարավորագրի վերահայտնագործում	87
Եզրակացություններ	89

ՄԱՍ II ԿԱՇԱՌՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

6. Կաշառք, հովանավորություն և նվիրատվություն	91
Կաշառք, նվեր, գին և թեյափող	92
Կաշառքի ու նվերի նմանությունը	95
Հովանավորությունը, նվիրատվությունը և փնտրեսական զարգացումը	103
Եզրակացություններ	108

ՄԱՍ III ԿԱՇԱՌՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԶԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

7. Կաշառվածությունը և քաղաքականությունը	109
Գողավարություն/գողապետություն	110
Երկկողմ մենաշնորհի և պետություններ, որտեղ իշխում է մաֆիան	117

Մրցակցային կաշառակերություն	119
Եզրակացություններ	121
8. Ժողովրդավարությունը և կաշառվածությունը. դրդապարճառներ	
և բարեփոխում	122
Ուրբական համակարգեր	122
Քաղաքական ազդեցության և քվեների գնում	127
Եզրակացություններ	137
9. Քաղաքական իշխանության վերահսկում	138
Փոխադարձ վերահսկման և հավասարակշռման սկզբունքը	
օրենսդրական գործընթացում	138
Օրենքի հաշվեքվողական գործադրում	140
Դաշնայնություն. ազատ ընտրություն	143
Դատարանի և դատախազության անկախ մարմիններ	145
Բացությունը և հաշվեքվողականությունը	156
Եզրակացություններ	168

ՄԱՍ IV ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

10. Միջազգային հանրության դերը	169
Կաշառվածության վերահսկումը զարգացման ծրագրերում	170
Աջակցություն բարեփոխմանը	174
Կաշառվածության սահմանափակումը միջազգային գործարարության մեջ	176
Փողերի լվացման և միջազգային հանցավոր գործարարության վերահսկումը	182
Միջազգային նոր կառույցներ	185
Եզրակացություններ. քաղաքականության տարօրինակություններն ու բարեփոխումը	187
11. Բարեփոխման տեղական պայմանները	189
Քաղաքական կառուցվածքը և բարեփոխումը	190
Աղմկահարույց գործերը և ճգնաժամը՝ որպես խթանիչներ	200
Բնական պաշարամիջոցներն ու արտաքին օգնությունը	203
Բարեփոխման պահանջներ	205
Բարեփոխման շարունակականությունը	209
Եզրակացություններ	212
12. Եզրակացություններ	214
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	219
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԲԱՌԱՑՈՒՅՑ	235
ԲԱՌԱՐԱՆ	244

ՆԱԽԱԲԱՆ

Տնտեսագիտությունը կաշառվածության ուսումնասիրման հզոր գործիք է: Մշակութային տարբերությունները և բարոյականությունը երանգ ու նրբություն են հաղորդում ուսումնասիրմանը, սակայն տնտեսական մոտեցումը ամենակարևոր գործիքն է կաշառվածության դրդապատճառները և ազդեցության ոլորտը հետազոտելու համար: Նախորդ գրքերից մեկում՝ *Corruption: A Study in Political Economy* (1978թ.) (*Կաշառվածություն. Տնտեսագիտական հետազոտություն*) գրքում, այս նկատառումը մատնանշել են տնտեսագետների և հատուկ պատրաստվածություն ունեցող քաղաքագետների համար: Քսան տարի անց հույս ունեն ընդլայնելու իմ լսարանը և խորացնելու վերլուծությունս այս նոր գրքով, որն անդրադառնում է այն հարցին, թե ինչպես է կաշառվածությունն ազդում զարգացող երկրների և պետական հասարակավարությունից անցում կատարող երկրների վրա:

Ձարգացումն ուսումնասիրող տնտեսագետների շրջանում հաստատությունների հանդեպ աճող հետաքրքրությունը նպաստեց այս գործի ձեռնարկմանը: Կաշառվածության ուսումնասիրությունը գիտնականներին և քաղաքականություն ձևավորողներին ստիպում է ուշադրություն դարձնել մարդու շահադիտական վարքագծի և հասարակական արժեքների միջև հակասությանը: Նրանք, ում մտահոգում է զարգացման անհաջողությունը, որը բնորոշ երևույթ է ամբողջ աշխարհում, բախվելու են կաշառվածության խնդրին և թույլ ու ինքնահաճ պետական կառույցներին, որոնք սնուն են դրան:

1995-96թթ. ես հրավիրված հետազոտող էի Համաշխարհային դրամատանը՝ Վաշինգտոնում (Քոլումբիայի շրջան): Քանի որ նախկինում անդրադարձել էի ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայում հանրային քաղաքականության խնդիրներին, Համաշխարհային դրամատանն անցկացրած մեկ տարին ինձ համար շատ կարևոր փորձառություն էր: Ես հսկայական գիտելիքներ ձեռք բերեցի՝ ոչ միայն ձեռքիս տակ եղածը կարդալով, այլև օգտագործելով դրամատան էլփոստի համակարգը՝ գտնելու համար փոխլրացնող հետաքրքրություններ ունեցող գործընկերներ: Գիտնականի համար, որը սովոր է մենակ նստել համակարգչի առջև, Վաշինգտոնում անցկացրած մեկ տարին ողջունելի և լիցքավորող փոփոխություն էր: Հետաքրքիր էր զբաղվել այնպիսի մի առարկայով, ինչպիսին կաշառվածության հիմնախնդիրն էր, որը Համաշխարհային դրամատունն անցյալում երկրորդական էր համարում: Ես սկսեցի մեղմատություններ հավաքել: Ինձ ասացին, որ երբ ծրագրի ամփոփման մեջ նշվում է «կառավարման դժվարությունների», «չբացատրված գերաճախսերի» կամ «փոխադրամիջոցների ավելորդ գնումների» մասին, ապա դա նշանակում է, որ կա կաշառվածության և ուղղակի գողության հիմնախնդիր: Համաշխարհային դրամատան աշխատողներից մեկը նշեց, որ Ինդոնեզիային վերաբերող զեկույցում «չափազանց մեծ միջոցներ-աշխատանք հարաբերության» մասին բողոքը նշանակում էր, որ կաշառվածությունը ոչ միայն լայն տարածված է, այլև շատ թանկ է նստում:

Կաշառվածության ուսումնասիրումը սկսել էի նախքան Համաշխարհային դրամատուն գալը և ավարտեցի այդտեղից հեռանալուց հետո, սակայն զրույցները դրամատան աշխատողների հետ, որոնք մշտապես առնչվում էին այդ խնդրին, խորացրին իմ գիտելիքները: Ինձ օգնած և աջակցած բազմաթիվ աշխատողներից ցանկանում են շնորհակալություն հայտնել հատկապես Լադիպո Ադամոլեկունին, Ուիլյամ Իսթերլիին, Դանիել Կաուֆմանին, Պետեր Լանգսթեին, Ջոն Մակգրեգորին, Բորիս Պլեսկովիչին, Նեյլ Ռոջերին, Սաբին Շլեմեր-Շուլտին, Ֆրեդերիկ Ստեյպենհարստին և Մայքլ Ստիվենսին: Արժույթի միջազգային հիմնադրամում ևս օգտակար քննարկումներ ունեցա Նադիմ Ուլ Հակի, Պաուլո Մաուրոյի, Վիտո Տանցիի և Քերոլայն Վան Ռիյկեզամի հետ: Նրանք բոլորն էլ պատրաստական օգնականներ էին, սակայն պատասխանատու չեն իմ ոչ մի եզրահանգման համար: Ակնհայտ է, որ Համաշխարհային դրամատունը նույնպես պատասխանատու չէ իմ վերլուծության և եզ-

րակացությունների համար: Հատկապես երախտապարտ են էստել Ջեյմսին, որն ինձ խորհուրդ տվեց դիմելու Համաշխարհային դրամատանը՝ հրավիրված հետազոտողի կարգավիճակ ստանալու համար, ինչպես նաև Մայքլ Քլայմին և դրամատան՝ հանրային ծառայությունների մասնավոր մատակարարման բաժնի աշխատակազմին՝ ինձ համար աշխատանքային հարմարավետ պայմաններ ստեղծելու համար:

Վաշինգտոն ժամանելուց քիչ ժամանակ անց Ջեյմս Վոլֆենսոնը՝ Համաշխարհային դրամատան նոր նախագահը, փորձեց կաշառվածության հարցը բացահայտորեն մտցնել դրամատան օրակարգ: Քանի որ իմ տնտեսագիտական ծրագրերը համապատասխանում էին դրամատան՝ իր դերն այս ոլորտում որոշելու ջանքերին, ինձ հաճելի էր իմ ներդրումն ունենալ դրամատան ներսում ընթացող քննարկմանը, որի արդյունքն էր *Helping Countries Combat Corruption* (World Bank 1977a) (Օգնություն երկրներին պայքարելու կաշառվածության դեմ) 1997թ. զեկույցը, որտեղ արտահայտված էր դրամատան դիրքորոշումը:

Դրամատնից հեռանալուց հետո էլ շարունակեցի աշխատել դրամատան աշխատակազմի հետ *World Development Report 1997, The State in a Changing World* (World Bank 1997c) (Աշխարհի զարգացման զեկույց 1997, Պետությունը փոփոխվող աշխարհում) զեկույցի՝ կաշառվածությանը վերաբերող բաժնի վրա և գրեցի *Corruption and Development* (Կաշառվածությունը և զարգացումը) վերնագրով աշխատությունը և ներկայացրի Համաշխարհային դրամատան՝ զարգացման տնտեսագիտությանը նվիրված տարեկան համաժողովին (Rose-Ackerman 1998b), որը տեղի ունեցավ 1997թ. մայիսին: Աշխարհի զարգացման զեկույցը պատրաստած խմբից Բրայան Լևին և Սանջայ Պրադան օգտակար քննադատներ և գործընկերներ էին: 1997թ. գարնանը Ջորջթաունի իրավունքի դպրոցում կարդացի «Համաշխարհային դրամատան դերը կաշառվածության վերահսկման գործում» (Rose-Ackerman 1997c) դասախոսությունը, որ նվիրված էր Ֆիլիպ Ա. Հարթի հիշատակին: Գրել են նաև ընդհանուր բնույթի հոդված ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի՝ քաղաքականության և ծրագրի աջակցության բաժանմունքի՝ կառավարման զարգացման և կառավարելիության բաժնի համար: ՄԱԿ-ի Ջարգացման ծրագիրն այս զեկույցը որպես քննարկման հոդված լույս ընծայեց *Corruption and Good Governance* (United Nations Development Programme 1997a) վերնագրով և օգտագործեց կաշառվածության վերաբերյալ սեփական տեսակետը մշակելու նպատակով: Վերջապես, Համաշխարհային դրամատան գործողությունների գնահատման բաժնի համար 1998թ. պատրաստել են մի հոդված՝ օգնելով կատարելու դրամատան հակակաշառվածության ջանքերի ամփոփումը: Անվար Շահը և գործողությունների գնահատման բաժնի աշխատակազմը ինձ ընդհանուր բնույթի օգտակար տեղեկություններ տրամադրեցին և առաջարկություններ արեցին:

1994թ. ես միացա «Թրանսպարենսի ինտերնեյշնլ» (Transparency International) կազմակերպության ԱՄՆ-ի մասնաճյուղի խորհրդին: Սա ոչ շահութամետ կազմակերպություն է, որն զբաղվում է կաշառվածության դեմ պայքարով ամբողջ աշխարհում: Դա ինձ հնարավորություն ընձեռեց լինելու միջազգային աճող շարժման ներսում և տեղյակ լինելու համաշխարհային զարգացումներին: Կազմակերպության ԱՄՆ-ի մասնաճյուղի գործադիր տնօրեն Նանսի Բոսուելը, ինչպես նաև խորհրդի նախագահ Ֆրից Հայմանը բարոյական մեծ աջակցություն ցուցաբերեցին իմ հետազոտական աշխատանքին: Այս միջազգային կազմակերպությունը, որի կենտրոնը Բեռլինում է, և որը մասնաճյուղեր ունի ամբողջ աշխարհում, կազմակերպության նախագահ Փիտեր Այգենի և առաջին կառավարիչ Ջերեմի Փոպի անխնայ ջանքերի շնորհիվ դարձել է համաշխարհային ուժ և կաշառվածությանը վերաբերող տեղեկության կենտրոն: Կաշառվածության հարցին միջազգային հնչելություն տալու գործում նրանց հաջողությունը նպաստել է իմ գիտական և քաղաքական նպատակներին: Ընդհանրապես, ես հայտնում կազմակերպությանը իմ աշխատանքի հանդեպ ցուցաբերած հետաքրքրության համար, սակայն նրանք, բնականաբար, ընդգրկված չեն իմ որևէ առաջարկության մեջ:

Այստեղ առաջ քաշած փաստարկների ձևավորմանը նպաստել են մի շարք համատեղ աշխատանքներ: Համաշխարհային դրամատան խմբից համագործակցել են արտաքին ներդրումների խորհրդատվական ծառայության աշխատող ժակլին Քուլիջի հետ՝ Աֆրիկայում կաշառվածությանը վերաբերող հոդվածի վրա աշխատելիս՝ և մասնավոր հատվածի զարգացման բաժնի աշխատող Էնդրյու Ստոունի հետ՝ Ուկրաինայում և Պակիստանում Համաշխարհային դրամատան հետազոտությունները վերլուծող հոդվածի վրա աշխատելիս: Յեյլի համալսարանում համագործակցել են քաղաքագիտության ասպիրանտ Սիլվիա Կուլացինգարիի հետ՝ Իտալիային վերաբերող հոդվածի վրա աշխատելիս: Շնորհակալություն են հայտնում բոլոր երեք համահեղինակներին՝ իրենց գիտելիքները և ներըմբռնումները ներկայացնելու համար այնպիսի առարկաների վերաբերյալ, որոնք ես չէի կարողանա հաղթահարել առանց նրանց:

Յեյլի համալսարանի քաղաքագիտության երկու շրջանավարտներ՝ Ջոնաթան Ռոդենը և Սառա Դիքսը, հետազոտական անխոնջ օգնություն ցույց տվեցին տարաբնույթ հարցերում: Անչափ երախտապարտ են իրենց օգնության, համբերատարության և լավ տրամադրության համար: Շնորհակալ են իմ օգնական Բարբարա Միանցոյին՝ այս ծրագրի բոլոր փուլերում օգնության համար, Ջին Քոուկլիին և Յեյլի իրավունքի գրադարանի աշխատակազմին՝ արդյուրներ գտնելու և հղումներն ստուգելու համար: Շատ շնորհակալ են իմ ամուսնուն՝ Բրյուս Ակերմանին, որն ուշադիր և քննադատաբար կարդաց այս գրքի ձեռագիրը:

Վերջին մի քանի տարվա ընթացքում իմ կատարած աշխատանքը ներկայացրել են տարբեր տեղերում: Սեմինարներ են անցկացրել մի շարք համալսարաններում և վարժարաններում, այդ թվում՝ Այովայի, Միչիգանի, Օտավայի և Փենսիլվանիայի համալսարաններում, Հարվարդի համալսարանի Քենեդիի անվան դպրոցում, Նյու Յորքի համալսարանում, Հյուսիսարևելյան համալսարանում, Սուարթմորի վարժարանում, Թրինիտի վարժարանում, Յեյլի համալսարանում և Բարդ վարժարանի Ջերոմ Լևիի անվան հաստատությունում: Հատկապես օգտակար էին մի քանի աշխատաժողովները Համաշխարհային դրամատանը և Արժույթի միջազգային հիմնադրամում: Համեմատական իրավունքի և տնտեսագիտության համաժողովը, որի անդամ են ես, հարմար վայր էր մի շարք աշխատանքներիս նախնական տարբերակները ներկայացնելու համար: Աշխատանքներս ներկայացրել են նաև Սան Ֆրանցիսկոյում՝ Ամերիկայի տնտեսագիտական ընկերակցության տարեկան ժողովում, Դակարում (Սենեգալ)՝ ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության հովանավորած աշխատաժողովում, Վաշինգտոնում՝ Ամերիկայի միջազգային իրավունքի ընկերակցության տարեկան ժողովում, միջազգային տնտեսագիտության հաստատության կազմակերպած գիտաժողովում, մի շարք աշխատաժողովներում և հանդիպումներում Սանտյագոյում (Չիլի) և Բուենոս Այրեսում (Արգենտինա)՝ ԱՄՆ-ի տեղեկույթի գործակալության հովանավորած այցելությանս ժամանակ, Փարիզում՝ Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպության (OECD) և ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրերի հովանավորած ժողովում, Մեխիկոյում՝ արհեստաբանական ինքնավար հաստատությունում կայացած՝ կառուցվածքային բարեփոխման վերաբերյալ գիտաժողովում, Բուենոս Այրեսում՝ Լատինական Ամերիկայի իրավունքի և տնտեսագիտության ընկերակցության ժողովում և Յեյլի միջազգային ու տարածքային հետազոտությունների կենտրոնում՝ ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրերի հովանավորած գիտաժողովում:

Այս գրքի նյութը կազմող իմ հետազոտական աշխատանքը հնարավոր դարձավ Յեյլի իրավունքի դպրոցի և Համաշխարհային դրամատան՝ հրավիրված հետազոտողների ծրագրի տրամադրած կրթաթշակների շնորհիվ: Երախտապարտ են այս երկու հաստատություններին՝ իրենց աջակցության համար, առանց նրանց վրա դնելու արդյունքների համար պատասխանատվությունը:

1. Ներածություն. կաշառվածության ծախսեր

Աղքատությունը, վատառողջությունը, կյանքի միջին տևողության կարճությունը, եկամտի և հարստության անհավասար բաշխումը տարածված երևույթներ են ամբողջ աշխարհում: Շատ երկրներ ունեն աճի խիստ ցածր կամ բացասական ցուցանիշեր: Նույնիսկ բնական պաշարներով հարուստ որոշ երկրներ ունեն աճի վատ ցուցանիշեր և մեկ շնչի ցածր եկամուտ: Մյուսները, հատկապես նախկին խորհրդային երկրները, ունեն տնտեսական ցածր ցուցանիշեր՝ չնայած աշխատուժի կրթական բարձր մակարդակին:

Այնուամենայնիվ, այստեղ հարակարծություն կա: Միջազգային փոխատու կազմակերպությունները, ինչպես, օրինակ՝ Համաշխարհային դրամատունը, հաճախ դժվարանում են ընդունելի ծրագրեր գտնել: Ինչու՞ է այդպես, եթե կարիքն ակնհայտորեն այդքան մեծ է: Հիմնախնդրի արմատներից մեկը հանրային և մասնավոր չգործող կառույցներն են: Վատ գործող կառավարությունների պատճառով արտաքին օգնությունն արդյունավետորեն չի օգտագործվում: Ցածր եկամուտ կամ աճի ցածր ցուցանիշ ունեցող երկրները հաճախ դժվարություններ ունեն, որովհետև չեն կարողանում արդյունավետորեն օգտագործել իրենց մարդկային ու նյութական պաշարամիջոցները:¹ Նրանք կարիք ունեն կառույցների բարեփոխման, սակայն մեծ քանակությամբ խումբ դժվար է: Ջրամբարների, մայրուղիների և նավահանգիստների կառուցումը դժվար չէ: Կառավարության բարեփոխումը և հզոր մասնավոր հատվածի ստեղծումն ավելի նուրբ և դժվար խնդիրներ են, որոնք հնարավոր չէ բերել ճարտարագիտական նախագծի:

Ձարգացող երկրների հնարավորությունների և միջազգային օժանդակող ու փոխատու կազմակերպությունների պահանջների միջև անհամապատասխանության պատճառները բազմազան են և պայմանավորված այդ երկրների պատմության ու մշակույթի տարբերություններով: Ըստ քննադատների՝ միջազգային կազմակերպությունները չեն կարողանում գնահատել տեղական ավանդույթներն ու կառույցները և չեն կարողանում իրենց ծրագրերը հարմարեցնել տվյալ երկրին բնորոշ պայմաններին: Թեև որոշ դեպքերում սա անկասկած ճիշտ է, սակայն միշտ չէ, որ դա այդպես է: Որոշ երկրների կառույցները վատ են հարմարեցված զարգացման իրենց իսկ սահմանած նպատակներին:

Քննադատների մյուս մասը հարցականի տակ է առնում միջազգային հանրության նպատակները՝ փաստարկելով, որ տնտեսական աճը բարեկեցության նեղ և թերի չափանիշ է: Սակայն նույնիսկ եթե այս քննադատությունը ճիշտ է, երկրների միջև մեծ տարբերություններ կան առողջապահության, կրթության, տնտեսական

¹ Ֆիլիպ Կիֆերը և Ստիվեն Քնակը (1995) քննության են առել կառավարության կառույցների ազդեցությունը ներդրման և աճի վրա 1974-89թթ. ժամանակահատվածում: Կառավարման որակը որոշելու համար նրանք համադրել են կաշառվածության, բռնագրավման վտանգի, օրենքի իշխանության, կառավարության կողմից պարտավորագրերից հրաժարման վտանգի և պաշտոնավարության որակի համաթվերը: Հեղինակները ցույց են տալիս, որ կառավարության կառույցների որակը առնվազն նույնքան որոշիչ է ներդրումն ու աճը բացատրելու համար, որքան քաղաքական ու քաղաքացիական ազատությունների և քաղաքական բռնության հաճախությունը: